«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ, ԱՐԽԻՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ԿՐՈՂ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ, ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱԿ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ Բանկի գլխամասային գրասենյակի 2 (երկու) վարչական շենքերի, արխիվային տարածքների և մասնաճյուղերի ամենօրյա ու պարբերական բնույթ կրող մաքրության, ընթացիկ սպասարկման աշխատանքների կատարման համար ընկերություն ընտրելու նպատակով:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 15:00-ին, ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48 հասցեում:

Ընկերության ներկայացուցիչները կարող են մասնակցել ծրարների բացման ժամանակ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԵ ՓԲԸ ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեով, Գործերի կառավարչություն:

<u>Տեղեկություններ մրցույթի անցկացման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ</u>

1. **Մրցույթի կազմակերպիչ՝**
   «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԵ ՓԲԸ հատուկ մրցութային հանձնաժողով:

2. **Մրցույթի անցկացման վայրը** և **մրցութային հայտերի ընդունման հասցեն՝**
   ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԵ ՓԲԸ Գլխամասային գրասենյակ:

3. Մրցութային հայտերի ընդունման ժամկետները՝

Մրցույթին մասնակցելու համար հայտերը և փաստաթղթերի փաթեթները ընդունվում են մրցույթի անցկացման վայրի հասցեով, ամեն օր, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից, ժամը 10:00-ից մինչև 17:00: Հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում՝ 2023թ. հոկտեմբերի 26-ը, ժամը 17:00 ներառյալ:

4. Մրցույթի անցկացման կարգը՝

4.1. Մրցույթն անց է կացվում բաց ձևով, մրցույթին կարող է մասնակցել հրավիրված ընկերությունը, որը կներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերը;

4.2. Մրցույթի պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի հրաժարվել մրցույթն անցկացնելուց;

4.3. Մրցութային հայտերը և անհրաժեշտ փաստաթղթերը մրցույթի մասնակիցները ներկայացնում են տպագրված ֆիրմային ձևաթղթի վրա (պետական համապատասխան մարմնի կողմից տրված փաստաթղթերի պատճենները՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով), հաստատված մասնակից-կազմակերպությունների ղեկավարների ստորագրություններով և կնիքներով, սոսնձված և մրցույթի մասնակցի կնիքով կնքված ծրարով, որի վրա նշվում է մրցույթի անվանումը, ուղարկողի (մրցույթի մասնակցի) և ստացողի (մրցույթի կազմակերպչի) հասցեները և ամբողջական անվանումները և գրառում՝ «Մրցութային հանձնաժողովին: Չբացել, մինչ հանձնաժողովի նիստը»;

4.4. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

4.4.1. Տեղեկանք՝ մրցույթի մասնակցի տվյալների մասին՝ կազմակերպության անվանումը, հասցեն և մասնակցի նախընտրությամբ լրացուցիչ այլ տեղեկատվություն,

4.4.2. Նամակ-հայտ մրցույթին մասնակցելու համար (գրվում է ազատ ոճով),

4.4.3. Ամսական վճարման չափը, մաքրող նյութերի ցանկը, աշխատակիցների թիվը և հերթափոխերի ժամերը,

4.4.4. Վճարման պայմանները (կանխավճար, վճարման կարգը) և հնարավոր զեղչերի տրամադրման քաղաքականությունը, երաշխիքի տրամադրում,

4.4.5. Պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն (այդ թվում գործադիր մարմնի ներդիրը) կամ քաղվածք պետական ռեեստրից,

4.5. Մրցութային հանձնաժողովի աշխատանքի և մրցույթի հաղթողին որոշելու կարգը.

4.5.1. Ծրարների բացման մրցութային հանձնաժողովի նիստը նշանակվում է 2023թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 15:00-ին մրցույթի պատվիրատուի հասցեում: Մրցույթի յուրաքանչյուր մասնակցի անունը, որի հայտով ծրարը բացվում է, հայտարարվում են նիստին ներկա գտնվող անձանց: Կազմակերպությունների գնային առաջարկները չեն հրապարակվելու,

4.5.2. Մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստին մրցույթի հաղթողին որոշելու համար, համաձայն մրցութային փաստաթղթերով նախատեսված կարգի և չափանիշների, ինչպես նաև «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ մատակարարների ընտրության և գնահատման կարգում նկարագրված բալային համակարգի, Հանձնաժողովն իրականացնում է մրցույթում մասնակցության հայտերի գնահատում և համադրում: Մրցութային հանձնաժողովի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ որոշվում է մրցույթի հաղթողը և կազմվում է համապատասխան արձանագրություն,

4.5.3. Հաղթող ճանաչելուց հետո՝ 3 բանկային օրվա ընթացքում մրցույթի կազմակերպիչը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկ է ներկայացնում կնքել պայմանագիր և ներկայացնում է դրա պայմանները,

4.5.4. Կողմերի միջև բոլոր պայմանները համաձայնեցնելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում մրցույթի կազմակերպչի և մրցույթի հաղթողի միջև կնքվում է պայմանագիր:

5. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ մեկնարկային պայմաններ՝

5.1. Բանկերի, այլ ֆինանսական և միջազգային կազմակերպությունների համար նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի առկայություն,

5.2. Պայմանագրի կնքման դեպքում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ բանկային հաշվի առկայության ապահովում,

5.3. Հնարավորության դեպքում՝ այլ պատվիրատուների կարծիքներ /արձագանքներ/,

5.4. Նախկինում կազմակերպության հետ համագործակցած ընկերությունների ցանկը:

6. Նկատառում

Այլ հավասար պայմանների դեպքում մրցույթում հաղթողի որոշման ժամանակ նախընտրությունը կարող է տրվել այն մասնակցին, որը հանդիսանում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ հաճախորդ: